Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.982

С1926сх 658

ԿՈՊԵՐԱՏԻՎ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՍԱՐԳ ՈՒ ԿԱՐԳԸ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

334.5
Ч-71

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՊՈՒ"

ՅԵՐԵՎԱՆ 1925 Թ.

ԳՆԵՅԵՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑԵՔ
ՀԱՅԿՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Տիխոմիրով.—Ինչպես անել, վոր կոոպերատիվի գործերը լավանան.—գունավոր շապիկով, 32 յերես գինն և 20 կոպեկ։

2. Կոոպերատիվի առաջին բայլերը. գունավոր շապիկով-յերես 40—գինն և 30 կոպեկ։

3. Պ. Ֆույլաճ.—Գյուղացի՛, ուժեղացրու կոոպերացիան 20 յերես, նկարազարդ շապիկով—գինն և 5 կոպեկ։

4. Ա. Տ. Ս.—Ինչպես պետք և լինի կոոպերատիվի գործակատարը—22 յերես նկարազարդ շապկով—գիներ 8 կոպ.։

5. Ինչպես հիմնել կոոպերատիվ խանութ։

6. Պոժիտնով.—Ինչպես պետք և հաշիվ տա սպառողական ընկերության վարչությունը։

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
(ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ)

1. Զայանով.—Կոոպերացիայի համառոտ դասընթաց։
2. Մակերովա.—Սպառկոոպերացիայի անցյալն ու ներկան։
3. Շտեյն.—Մուրճակը։
4. Ոստրովսկայա.—Կոոպերացիան ինչու համար և պետք գյուղացուն։
5. Կոժանչի.—Ինչ պետք և իմանա ամեն մի բանվոր։
6. Դենիսով.—Կազմակերպեցեք խանութային հանձնաժողովներ։
7. Շալով.—Հաշվապահության համառոտ ձեռնարկ։
8. Կերժենցև.—Կազմակերպիր ինքդ քեզ։

№610
Ս
Ս 1501
334.5
Կ-71
С1926/65
05 ЯНВ 2010

Գրքերատան բոլոր յերկրների, միացե՛ք.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՍԱՐԳ ՈՒ ԿԱՐԳԸ

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

Գ. ՆԱԶԱՐՅԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՊԻ»

1925 թ.

23 MAY 2013

25982

ՅԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատ. 9 … Տիրաժ 3000

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՏՏ60 · [illegible]

ԻՆՉՊԵՍ ՀԻՄՆԵԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽԱՆՈՒԹԸ

Սպառողական ընկերության վարչությունը ինչ գործ էլ ակսելու լինի, ինչի վոր ձեռք զարկի՝ միշտ մի ձևով պիտի առաջնորդվի՝ յուր անդամների իրական օգուտի հարցով։ Մասնավոր խանութպանը՝ հիմնելով յուր խանութը՝ միայն այն մասին է մտածում, թե ինչպես ավելի շատ փող աշխատի։ Յեվ ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր գնորդների շահերն ու հարմարությունները նրա համար վոչ մի նշանակություն չունեն։ Ընդհակառակը՝ սպառողական ընկերության համար յուր անդամների շահերը մեծ նշանակություն ունեն և ընկերությունը պիտի աշխատի հնարավորության չափ բավարարել նրանց։ Հենց այդ պատճառով յուրաքանչյուր կոոպերատիվի կյանքին վերաբերվող այն կարևոր հարցին՝ թե ինչպիսի տեղ ընտրել բացվելիք խանութի համար, վարչությունը պիտի մոտենա շատ մեծ զգուշությամբ։ Բացի այդ՝ վարչությունը պիտի հիշի, վոր խանութ հիմնելը հեշտ բան չի այս գործում հենց առաջին քայլերից կարելի յե այնպիսի սխալներ անել, վորոնք հետո կոոպերատիվի աշխատանքների և գոյության համար կորստաբեր կարող են լինել։

ՀՆԱՐԱՎՈՐ ՍԽԱԼՆԵՐ.

Պատահում է, վոր նոր կազմակերպվող կոոպերատիվը հնարավորություն է ունենում պատրաստի մասնավոր խանութ ձեռք բերելու՝ ապրանքով ու գույքով։ Այսպիսի դեպքը կոոպերատի-

վի վարչությանը շատ գրավիչ է յերևում, վորովհետև նա վարչությանը ազատում է նոր բացվելիք կոոպերատիվը սարքելու հոգսերից ու աշխատանքներից—հնարավորություն է տալիս կոոպերատիվի առևտուրը շուտ սկսելու։

Այսպես սկսված գործը հենց սկզբից կարող է փչանալ։ Նույն իսկ այն դեպքում, յերբ «գործի» համար առանձին վարձատրություն («ОТСТУПНОЙ») չի պահանջվում, այլ խանութի ապրանքն ու գույքն է գնահատվում ու առնվում։ Այդ դեպքում էլ կոոպերատիվը վտանգում է յուր շրջանառության միջոցները՝ գնելով այնպիսի ապրանքներ, վորոնք դժվարությամբ կծախվեն, կամ բոլորովին չեն ծախվի։ Դրա փոխարեն՝ կոոպերատիվը կարող է ձեռք բերել նոր ապրանքներ, վորոնք հեշտությամբ կծախվեն։ Մինչդեռ՝ մասնավոր խանութ գնելու դեպքում՝ կոոպերատիվը կծանրաբեռնվի հին, փթած ապրանքներով, վորոնք յերկար ժամանակ խանութում ընկած են յեղել։ Պարզ է, վոր այդպիսի ապրանքների վաճառքով կոոպերատիվը հենց իր գործունեյության առաջին որերից իսկ իր անդամների վերաբերմունքը կվատացնի դեպի ինքը։ Շատ ընկերություններ յեն այդ տեսակի գործունեյությունից սնանկացել ու վնասներ կրել. հենց այդ պատճառով վարչությունը պիտի շատ զգույշ լինի՝ մասնավոր խանութներ գնելու դեպքում։

Ավելի վատ է այն կոոպերատիվի դրությունը, վոր խանութպանից նրա խանութն ու ապրանքները գնելով՝ միաժամանակ գործակատար է հրավիրում հենց այդ խանութի նախկին տիրոջը։ Այս դեպքում կոոպերատիվ խանութը ելի հին խանութն է, միայն նոր ցուցանակով։ Այն գործակատարը, վոր ինքը տարիներով խանութի տեր է յեղել, դժվարությամբ է սովորում վարչությանը հպատակվելուն։ Շատ անգամ, հետո յե միայն պարզվում, վոր նա յուր խանութը հենց այն պատճառով է ծախել, վոր խանութին տերություն անել ու գործերը կարգին վարել չի կարողացել։ Պարզ է, վոր այդպիսի ծառայողը կոոպերատիվին ել չի կարող ոգտակար լինել։

Փորձը ցույց է տալիս, վոր չըպիտի խանութ վարձել է այն տանը, վորի տիրոջը կոոպերատիվի վարչությունը գործակատար է հրավիրելու։ Այս բանը գյուղում շատ հաճախ է պատահում։ Այսպիսի դեպքերում վարչության ու գործակատարի մեջ շատ թյուրիմացություններ կարող են լինել, քանի վոր վերջինս միաժամանակ տնատեր է։ Նա կարող է վատ գործակատար դուրս գալ, բայց քանի վոր նա տնատերն է՝ պետք է մի կերպ հաշտվել նրա հետ։ Շատ է պատահել, վոր նման տնատերը կոոպերատիվին յուր տանից դուրս է արել և ինքը յուր խանութն է բաց արել։

Վերջապես պետք է զգույշ լինել գործի հենց սկզբից սեփական շինություն ձեռք բերելիս։ Քաղաքի կոոպերատիվների համար այդ բանը ընդհանրապես հնարավոր չէ, քանի վոր կոոպերատիվները քաղաքներում տեղավորվում են պետության պատկանող տներում։ Ինչ վերաբերվում է գյուղական կոոպերատիվներին, նրանց համար այդ հնարավոր է և հենց վոր նրանք բացվելիք կոոպերատիվի համար հարմար տեղ չեն գտնում, վորոշում են տուն գնել, կամ սեփական շենք կառուցել։ Այստեղ պետք է հիշել, վոր դրա հետևանքով կոոպերատիվը ծախսելու յե փայավճարների մեծ մասը՝ մի բան, վոր նրան մեծ չափով կը զրկի շրջանառության միջոցներից։

Համենայն դեպս՝ յեթե անհրաժեշտ է, վոր վարչությունը յուր սեփական շենքը կառուցի՝ պիտի դրա համար առանձին միջոցներ ծախսել (որինակ՝ հատուկ փոխառություն բանկից) և յերբեք կոոպերատիվի սեփական միջոցները չպետք է գործադրել այդ նպատակի համար։

ԽԱՆՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խանութի հարցը պիտի բազմակողմանի քննության յենթարկել։

Եթե շենքը հարմար չլինի, ապրանքները փչանալու յեն, ամեն տեսակի կորուստների տակոսը շատանալու յե։ Ապրանքների սեծամասնության համար թե շատ խոնավությունը և թե ծայրահեղ չորությունը վնասակար են։

Խանութ փնտրելիս՝ պիտի ի նկատի առնել, գոնե մոտավոր կերպով՝ թե խանութը ինչ սեծության և լինելու և վորքան և համապատասխանելու կոոպերատիվի գնորդների հարմարությանը։ Չպիտի մոռանալ, թե ինչ տեսակ ապրանքներ յեն ծախվելու, որական ինչքան առևտուր և լինելու, գնորդները որվա վորոշ ժամերին մի անգամից ևն խանութ լցվելու, թե ամբողջ որվա ընթացքում մաս-մաս են գնումներ կատարելու։ Վարչությունը այսպիսի հաշիվներ պիտի անի. ասենք՝ ընկերությունը ունի 500 անդամ-գնորդներ, յենթադրենք՝ նրանցից ամեն մեկը շաբաթական յերկու անգամ կոոպերատիվից ապրանք և գնելու, ուրեմն որական միջին թվով 165 գնորդներ են լինելու. յերևի խանութում մի 35 հոգի յել մասրավոր կամ կողմնակի գնորդներ կլինեն. ուրեմն՝ այնպիսի խանութ պիտի ընտրել, վորը կարողանա որական 200 հոգու կամ ամեն մի ժամում 25 հոգու բավարարել։ Պիտի ի նկատի առնել, վոր գյուղական կոոպերատիվներում առևտուրը յերեկոներն և լինում կամ տոներին, իսկ քաղաքներում՝ բանվորական կոոպերատիվներում ավելի շատ առևտուրը կատարվում և առավոտներն ու յերեկոները։ Նշանակում ե՝ այնպիսի տեղ պիտի գտնել, վոր առևտուրի ամենայեռան ժամանակն իսկ խանութը նեղվածք չլինի։ Վերջապես՝ ի նկատի պիտի առնել կոոպերատիվում ծախվելիք ապրանքների տեսակները։ Ինչքան այդ տեսակները շատ յեն նույնչափ ել կոոպերատիվի շենքը լայն պիտի լինի։

Խանութի նեղվածքությունը, մթությունը և այլ անհարմարությունները ծառայողների աշխատանքի վրա վատ են ազդում և գնորդների դժգոհությունների պատճառ են դառնում։ Նեղվածքությունը հնարավորություն չի տալիս խանութը մաքուր ու սարգած պահելու։ Ապրանքները այս դեպքում պահվում են անկարգ դրության մեջ, մեկ մեկու վրա թափված և փչանում են։ Մի խոսքով՝ յեթե խանութը հարմար չե, կոոպերատիվը հնարավորություն չի ունենալու յուր ամենագլխավոր գործը կատարելու՝ կոոպերատիվի անդամներին լավ մթերքներ մատակարարելու։

Խանութը պիտի լինի բնդարձակ, լուսավոր ու չոր։ Խանութի սեծությունը պիտի համապատասխանի կոոպերատիվի անդամների թվին ու ապրանքների տեսակներին։

Լավ խանութը կոոպերատիվի համար վոչ տայլություն է, վոչ բեռի բան, այլ անհրաժեշտություն է յեվ նրա գործունեության հաջողության ամենագլխավոր պայմանն է։ Հենց դրա համար յերբեք չպիտի ձգտել ամենաեժան խանութը վարձելուն վերոլիշյալ այդ եժան խանութը վերջին հաշվով շատ թանգ է նստում։

Խանութի ընտրության ժամանակ պիտի ի նկատի առնել այն, վոր հրդեհի տեսակետից նա անվտանգ լինի։ Անհրաժեշտ է հոգ տանել, վոր կոոպերատիվը հեռու լինի հեշտ վառվող նյութերից ու շինություններից։

Վարձված խանութում վարչությունը պիտի հարկավոր դեպքերում վորոշ նորոգումներ ու հարմարություններ ստեղծի։

Մեծ ուշադրություն պիտի դարձնել, վոր կոոպերատիվը ունենա ամուր կողպեքներ ու փականներ՝ գողությունների վերատանդից կոոպերատիվը պաշտպանելու համար։ Այս բանին լուրջ ուշք չդարձնելու հետևանքը շատ հաճախ կոոպերատիվի համար կոքատարեր է լինում։ Դռները ներսից պիտի յերկաթապատ լինեն։

նեն և ամուր փակվող։ Այս բոլորի համար ծախսեր չպիտի խնայել։

ԽԱՆՈՒԹԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ նշանակություն ունի և այն, թե վորտեղ պետք է խանութ բանալ։ Շատ հաճախ՝ մանավանդ քաղաքներում, ձգտում են խանութը բանալ կենտրոնում, մասնավոր խանութների կողքին կամ նրանց մեջ տեղը։ Յեթե այդ ձգտումը միայն մրցումի, գնորդներ գրավելու նպատակ ունի, ապա կոոպերատիվի վարչությունը շատ սխալ է վարվում։

Խանութը կենտրոնում բաց անել, հաշվի առնելով կոոպերատիվի կողքից անցնող պատահական գնորդներին ու ճանապարհորդներին, մեծ սխալ է։ Սպառողական ընկերությունը առաջին հերթին պիտի յուր անդամների համար մտածի։ Յեթե կոոպերատիվի մշտական գնորդ-անդամներից բացի՝ նա կարողանում է բավարարել նաև կողմնակի քաղաքացիների, այդ ինչ չունի, բայց խանութը բաց անել՝ հույս դնելով այնպիսի գնորդների վրա, վորոնք այստեղ այստեղ են ապրանք գնում, վաղը մի այլ տեղ, նշանակում է սպառողական ընկերությունը հենց սկզբից դնել մասնավոր խանութպանի համեմատությամբ ավելի պակաս ձեռնտու պայմաններում։ Կոոպերատիվը այդ դեպքում զրկվում է այն հանգիստ հատոցումից, վոր յուր ապրանքները գնվելու յեն մշտական, հավատարիմ գնորդների՝ կոոպերատիվի անդամների կողմից։

Գործը ամուր կընդունվի, յեթե նրա գնորդները վոչ թե պատահական մարդիկ յեն, այլ կոոպերատիվի մշտական անդամները։

Պիտի սկսել քիչից, փոքրից։ Հարկավոր չէ մեծ ծախսեր անել խանութի տեղի համար. այդ բանը կարող է մեծ ջլատ հասցնել կոոպերատիվին. նրա շրջանառության դրամագլուխները փոքրացնելով, հետևապես և առևտրի միջոցներից զրկելով նրան։

Խանութի տեղն ընտրելը պիտի ապացույց, վոր վարչությունը մտածում է յուր անդամների հարմարության մասին։ Հենց այդ պատճառով, իրը կանոն պիտի ընդունել—**խանութի համար տեղ ընտրել այնտեղ, վորտեղից կոոպերատիվի անդամների բնակավայրերը մոտ են գտնվում։**

Այս պայմանը, մանավանդ քաղաքներում՝ կարևոր նշանակություն ունի։ Քաղաքներում, մանավանդ մեծ քաղաքներում, ժամանակը շատ թանդ է և ամենքը շատ են զբաղված։

Կոոպերատիվ խանութից բացի՝ մասնավոր խանութներ ինչքան կուզես կան։ Շատերը կարող են ճանապարհին մասնավոր խանութ մտնել, յեթե կոոպերատիվը հարմար տեղ չի գտնվում։ Չի կարելի քաղաքի կենտրոնում բաց անել կոոպերատիվը, յեթե անդամները ապրում յեն քաղաքի ծայրերում։

Գյուղերում ու փոքր քաղաքներում խնդիրը այնքան էլ դժվար չի լուծվում։ Այստեղ կոոպերատիվը պիտի բանալ կենտրոնում, քանի վոր այդ բոլորի համար ձեռնտու է. կենտրոնը կամ գյուղի շուկան է, կամ ճանապարհը, վոր գյուղի միջով է անցնում. այնտեղ էլ լինում է ամենամեծ շարժումը և մարդկանց հավաքատեղին։ Հենց այդ պատճառով՝ գյուղում պիտի խուսափել կենտրոններից հեռու կոոպերատիվ խանութ բանալուց։ Այսպիսի դեպքերում ընկերությունը կյուրակի ու բաղարի օրերին զրկվում է յուր գնորդների մեծ մասից, վորոնք մասնավոր խանութներից յեն գնումներ կատարում։ Կոոպերատիվում այս դեպքում միայն զանազան մանրունք են գնում և այն էլ, յեթե մոռացել են շուկայում գնեն։

ԽԱՆՈՒԹԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ

Կոոպերատիվ ընկերությունն ամեն կերպ պիտի իրան մասնավոր առևտրից առանձնացնի (отмежевывается) և վերացնի այն ամենը, ինչ վոր կոոպերատիվի անդամներին կարող է

հիշեցնել մասնավոր առևտուրը։ Գործն այնպիսի հիմքերի վրա պիտի դնել, որ բոլորի համար պարզ լինի, թե սպառողական ընկերությունը հասարակական գործ է, որ նա ոչ մի կապ չունի մասնավոր առևտրական ձեռնարկության հետ—նույնիսկ խանութի արտաքին տեսքից այդ բանը պիտի յերևա։

Հենց խանութին մոտենալը և խանութի մուտքը դատարկ բան չպիտի համարել։ Նախքան խանութ մտնելը գնորդը խանութը տեսնում է դրսից, դիտում է խանութի մուտքը, ցուցանակը։ Յետ գնորդը խանութ է մտնում այդ դիտողությունների տակ։ Հենց այդ պատճառով՝ պիտի մտածել ոչ միայն այն մասի, թե ինչ է զգում գնորդը՝ յերբ նա արդեն խանութ է մտնում, այլ և այն մասին, թե նա ինչ է զգում, յերբ պատրաստվում է խանութ մտնելու։

Քաղաքում ուշք պիտի դարձնել մայթերի վրա։ Յետ վարչությունը նույնիսկ ծախսերի առաջ չպիտի կանգ առնի մայթերը նորոգելու համար, յեթե մայթերը վատ դրության մեջ են։ Դրա հետևանքով խանութում ավելի քիչ փոշի ու ցեխ կը լինի և գնորդն էլ լավ տրամադրությամբ խանութ կը մտնի։ Հոգ տանելով մայթերի կանոնավոր դրության մասին՝ սպառողական ընկերությունը ցույց է տալիս յուր ուշադրությունը դեպի կոոպերատիվի գնորդները։

Գյուղի կոոպերատիվն էլ այս մասին պիտի մտածի, այնպես որ՝ գնորդը խանութ մտնի մաքուր վոտքերով և խանութին մոտենալով՝ առիթ չունենա գանգատվելու, թե խանութի ճանապարհը վատ է։

Խանութի շուրջը լավ կըլինի ծառեր տնկել, այնպես, որ տեսարանը դիտողի համար գրավիչ լինի։ Լավ կլինի խանութի մուտքի մոտ վոտքերը մաքրելու յերկաթ ունենալ։ Լավ կլինի խանութի մոտ ձիերը կապելու հարմարություն ևս ունենալ, որ ճանապարհորդ գնորդը խանութ մտնելիս ձիերի մասին անհանգիստ չը լինի։

Խանութի դրսի պատը պիտի նույնպես մաքուր լինի։ լավ չէ, յերբ այդ պատը կեղտոտ է կամ սվաղը թափված է։ Պիտի պատն այդ դեպքում մաքրել (սպիտակեցնել) և սվաղը ամբողջովին նորոգել։ Խանութի մուտքը, պատուհանները և հատակը պիտի միշտ մաքուր լինեն։

Ուշադրություն պիտի դարձնել կոոպերատիվի ցուցանակին։ Հաճախ գյուղերում կոոպերատիվները նույնիսկ ցուցանակ չեն ունենում։ Այդպես չի կարելի։ Կոոպերատիվը պիտի պարզ աչքի ընկնող ցուցանակ ունենա, այնպես որ՝ ամեն մի անցնող ուղի-չուղի կոոպերատիվը հիշի, կոոպերատիվի մասին մտածի։ լավ կլինի, յեթե կոոպերատիվի ցուցանակի վրան լինի որևե նկար կամ կոոպերատիվ կանոն (լոզունգ)։

Ցուցանակի վրա շատ բան գրելու կարիք չկա։ Կարիք չկա ցուցանակի վրա գրելու այն անունը, որ կանոնադրությամբ նախատեսված չէ։ Յեթե ընկերությունը յուր կանոնադրությամբ միայն յուր գյուղի անունն է կրում՝ հարկավոր է ցուցանակի վրա այդպես էլ գրել. «Քանաքեռի սպառողական ընկերություն», «Դսեղի գյուղական կոոպերատիվ» և այլն։ Իսկ այն ընկերությունները, որոնք որևե անուն ունեն, կանոնադրությամբ նախատեսված՝ ցուցանակն այդպես էլ պիտի պատվիրին. օրինակ՝ «Եղջիածնի Միություն սպառողական ընկերություն», «Նոր—Բայազետի Աշխատավոր կոոպերատիվ» և այլն։

Այն դեպքում, յերբ մի և նույն տեղը շատ կոոպերատիվներ կան՝ կարևոր է, որ ցուցանակի վրա մանրաժասն գրվի կոոպերատիվի անունը։

Խանութ մտնելիս պիտի գնորդի աչքին ընկնեն կոոպերացիայի զանազան լոզունգներ ու պլակատներ։ Լավ կըլինի ունենալ «սպառողական ընկերության անդամի տասն պատվիրանները» և ուրիշ պլակատներ ու լոզունգներ։ Այդ բոլորի նպատակն այն է, որ գնորդը թեթև կերպով յուրա-

գնում է, թե ինչ է սպառողական ընկերությունը և թե ապագայում նրանից ինչ օգուտներ կարելի յե սպասել։

Խանութում պիտի կախել հիմնական մի շարք ապրանքների գները, այնպես որ գնորդը կասկած չունենա, թե գործակատարը յուր օգտին ավելի յե առնում ապրանքները վաճառելիս. բացի այդ՝ գները յեթե կախված լինեն՝ գնորդը կկարողանա նախորոք հաշվել յուր գնումների համար հարկավոր փողը։ Կոոպերատիվի գործերին շատ է օգնում նաև այն, որ խանութում ընկերության հաշիվները կախում են և հայտարարվում է, թե քանի հոգի և ովքեր են կոոպերատիվին անդամագրվել։ Կան կոոպերատիվներ, որ իրենց թղթի փաթեթների վրա կոոպերատիվ պատվերներ են տպագրում. որինակ 1. «Բոլոր անհրաժեշտ առարկաները գնեցեք կոոպերատիվից», 2. «Մի մոռանաք, որ ինչքան շատ անդամներ ունենա կոոպերատիվը, այնքան ապրանքներն ավելի էժան կլինեն». 3. «Մի խափեք խանութպանների խարդախություններից ու սիրալիրություններից. խանութպանը ձեզնից միայն օգուտ քաղել է ուզում»—և այլն։

Ընդհանուր առմամբ խանութի արտաքինին և այս բոլոր մանր բաներին շատ ուշադրություն պետք է դարձնել։ Մանր ծախսերը միշտ կծածկվեն։ Գնորդը պիտի ամիջապես զգա կոոպերատիվի և մասնավոր խանութների տարբերությունը, միանգամից պիտի տեսնի, որ այստեղ մասնավոր խանութի նման չե, այլ ամեն ինչ ցույց է տալիս, որ կոոպերատիվում մտածում են գնորդների ու նրանց հարմարությունների մասին։

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽԱՆՈՒԹԻ ԲԱԿԸ

Կոոպերատիվ խանութի համար բակը մեծ նշանակություն ունի. յեթե հնարավոր է՝ պիտի հենց սկզբից մտածել, որ կոոպերատիվ խանութը բակ ունենա։

Յեթե կոոպերատիվի գործերը հաջող գնան և գործը լայնանա, ապա բակ ունենալով՝ կոոպերատիվը մի առժամանակ կարող է առանց նոր շինություն վարձելու «յոլա գնալ»։ Խանութի մեջ ապրանքները դասելը, տեսակների բաժանելը, դատարկ արկղները տեղավորելը կխանգարեն առուտրին ու գնորդների համար անհարմարություն կստեղծեն։ Այդ բոլորը կարելի յե անել բակում։ Խանութի մաքրությունն ու սարգած լինելն ել պահանջում են, որ կոոպերատիվն անպատճառ բակ ունենա, իհարկե, բակն ել պիտի մաքուր լինի։

Գյուղերում և քաղաքի ծայրամասերում կոոպերատիվի բակում ժամանակավորապես կարող են մնալ կոոպերատիվի գնորդների ձիերն ու սայլերը։ Յեթե բակ չկա—գնորդը կրգնա մասնավոր մի իջևան, որտեղ մասնավոր խանութ ել կա։ Այդպիսով գնորդը կոոպերատիվի համար կորչում է։ Սպառողական ընկերությունը այնպես պիտի անի, որ յուր գնորդների հետ ավելի շատ կապ ու հարաբերություն ունենա։ Այդպիսով միայն գնորդը կոոպերատիվի գործերին մոտիկից է ծանոթանում ու հասկանում է, թե ինչ է կոոպերատիվը։ Աստիճանաբար նա դառնում է կոոպերատիվի հավատարիմ գնորդ, գիտակից անդամ։

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Բացի դեպի փողոց նայող խանութից, ցանկալի յե, որ կոոպերատիվն ունենա նաև պահեստ, մառան և վարչության աշխատանքների հատուկ սենյակ։

Պահեստը պիտի խանութին կից լինի։ Այստեղ են պահվում ապրանքների ավելորդ պաշարները կամ այն ապրանքները, որ այլ ապրանքների հետ կողք-կողքի խանութում տեղավորելը անհարմար է։ Պահեստում են կատարվում նաև գյուղական ծախու մթերքների պատրաստումը։ Հարկավոր է

ունենալ առանձին գրասենյակ՝ վարչության աշխատանքների համար։ Գրասենյակում են տեղի ունենում վարչության նիստերը, այստեղ են պահվում գանձարկղը և այն բոլոր փաստաթղթերը, որոնց տնեատուն պատեցնելը անհարմար է և անթույլատրելի։ Բոլոր փաստաթղթերը գտնվում են այդ սենյակում, պահվում են պահարանում կամ սնդուկի մեջ, որի բանալին գտնվում է նախագահի, գանձապահի կամ հաշվապահի մոտ։ Գրասենյակի մուտքը կոոպերատիվից առանձին պիտի լինի. այդպես ավելի յե հարմար։ Յեթե գրասենյակի ու խանութի մեջ էս դուռ լինի, վատ չի լինի, միայն թե այդ դուռը խանութի կողմից միշտ պիտի փակված լինի։

Այս բոլորը, (պահեստ, խանութ,գրասենյակ) պիտի մեկ-մեկից մոտիկ լինեն։ Պահեստի, մառանի ու խանութի մեջ կապը պիտի հարմար լինի. ամբողջ շինությունը ապահով պիտի լինի թե հրդեհից և թե գողություններից։

Բացի այդ՝ հարկավոր է նկատի առնել, որ 1) կոոպերատիվ խանութը չափավոր չոր լինի, որովհետև խոնավությունը ապրանքների մեծ մասի վրա շատ վատ ազդեցություն է ունենում։ Շատ չոր խանութն էլ լավ չէ, որովհետև այս դեպքում ապրանքները շատ չորանում են, 2) խանութում բարեխառն ցրտություն ունենալը շատ լավ ու ձեռնտու յե կոոպերատիվի համար։ Այդպիսի խանութում՝ մանավանդ ամառը, ամեն տեսակի ապրանքներ շատ լավ են պահվում. 3) կոոպերատիվը պիտի ունենա հարմար մուտք. յերկու մուտք ունենալը շատ չարաշահությունների ու գողությունների հարմարություն է տալիս—մանավանդ մեծ առևտրի որերին. 4) ներքին հարմարությունն այնպես պիտի լինի, որ պատերից գոնե մեկը (որ մուտքին դեմ ու դեմ) ամբողջովին դարակներ ու պահարաններ ունենա՝ ապրանքների դասավորման համար և բացի այդ՝ ունենա առևտրի համար հարմար դազգյահ (прилавок)։

Այս բոլորը գործակատարին հարմարություն կտան ապրանքները լավ պահելու և կանոնավոր ու արագ առևտուր անելու։

Ապրանքների պահեստը պիտի չոր լինի, սառն և վոչ շատ մութ։ Պահեստի մուտքը խանութի միջով չպիտի լինի. դա մեծ անհարմարություն է։

Մառանը պիտի չոր լինի և մշտական միջակ տաքություն ունենա, այնպես որ՝ ամառը շատ տաք չլինի ձմեռը սառն։

Յեթե կոոպերատիվի վարչությանը յերկու շենք և առանձարկվում—մեկը հարմար, չոր, ընդարձակ, լուսավոր ու թանգ, իսկ մյուսը անհարմար, խոնավ, մութ, նեղվածք և եժան,—պետք է ընտրել առաջինը։ Դա ամենախելոք տնտեսությունն է, որովհետև դրանով կոոպերատիվը հետագա շատ ծախսերից ու վնասներից իրեն ազատում է։

Գյուղական կոոպերատիվը շենք փնտրելիս՝ պիտի մտածի գործակատարի բնակարանի մասին։ Յեկվոր գործակատարի հարմար գյուղում բնակարան գտնելը դյուրին գործ չի։ Ընտանիքատեր գործակատարին յեթե հարմար բնակարան տրվի—նա ուրախությամբ կաշխատի։ Ի հարկե, այս դեպքում դարձյալ այնպես պիտի անել, որ գործակատարի բնակարանի մուտքը խանութի միջով չլինի։ Այդ անթույլատրելի յե։ Դրա հետևանքով շատ գրույցներ ու ասեկոսեներ են լինում թե գործակատարի և թե վարչության հասցեին։*)

---

*) Ապրանքները խանութում պահելու, գործակատարի գեղջերի, ապրանքների բնական չորանալու և դրա հետ կապված այլ խնդիրների մասին Հայկոոպը պատրաստում է հրատարակության տալու համապատասխան բովանդակությամբ մի այլ գրքույկ։

Հրատարակչություն։

ԽԱՆՈՒԹԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Խանութի ներսը պիտի համեստ սարք ու կարգ ունենա․ առանձին զարդարանքներ հարկավոր չեն։ Ամեն մի ավելորդ բան միայն դժվարացնում է խանութը մաքուր պահելը։ Խանութի համար կարելի յե ձեռք բերել նաև հին կահավորություն, յեթե միայն այդ կահավորանքը լավ է պահպանվել։ Ամեն մի կոպեկի տնտեսումը կոոպերատիվի համար շատ օգտակար է։ Ընդհանուր առմամբ խանութի կահավորումը պիտի միշտ համապատասխանի կոոպերատիվի սպասելիք շրջանառությանը։

Համենայն դեպս՝ նոր կոոպերատիվներին խորհուրդ չենք տալ իրենց սկզբնական կապիտալի $^{1}/_{8}$-ից մինչև $^{1}/_{10}$-ից ավելի գումար ծախսել կոոպերատիվի կահավորման վրա։

Խանութին հարկավոր են պահարաններ ու դարակներ։ Յեթե պատրաստին անհնարին է գտնել՝ պիտի լավ հյուսնի պատվիրել՝ պայմանավորվելով, վոր հարկավոր իրերը հյուսնը շինելու յե բարեխիղճ ու անպայման չոր տախտակներից։ Խանութի կահավորությունը չպիտի ներկել։ Փայտը յուր բնական գույնով ավելի լավ է լվացվում, քան ներկածը։ Կահկարասին դրսի կողմից կարելի յե ներկել յուղաներկով։

Փորձը ցույց է տվել, վոր աշխատանքի դյազգյահը պիտի ունենա 1 արշ. 3 վերշոկ բարձրություն, 1 արշին լայնություն։ Յերկարությունը պիտի խանութին համարեցնել։ Պահարանի բարձրությունը $3^{1}/_{4}$ արշին պիտի լինի. ներքին մասն ավելի լայն, քան վերինը։ Պահարանի խորությունը տասը վերշոկ պիտի լինի։

Պահարանի ներքին մասը պիտի ունենա **սործական արկղներ**, իսկ վերին մասը՝ դարակներ։ Դարակների դռները պիտի հեշտությամբ բացվեն ու փակվեն։ Շարժական արկղները պիտի այնպես շինված լինեն, վոր փակվելու հարմարություն

...ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ունենան։ Այս կերպ արկղներում պահվող ապրանքները պաշտպանվում են փոշուց, ճանճերից ու մկներից։

Արկղների ծածկոցն այնպես պիտի շինած լինի, վոր յերբ արկղը պահարանից դուրս եք քաշում՝ արկղի ծածկոցը մնում է պահարանի ներսում, իսկ հենց վոր արկղը հետ եք հրում պահարան՝ նա ինքն իրան ծածկվում է։ Այդ հարմարությունը շատ հեշտությամբ ստեղծում են հյուսները և այդ ձևով կործակատարի աշխատանքը շատ թեթևանում է։

Պահարանի վերին մասը պիտի ունենա դարակներ 6-7 վերշոկ լայնությամբ. պահարանի այս մասը ապակյա դռներ պիտի ունենա. այնտեղ պահվում են վորոշ ապրանքներ, վորոնց առանձին պահելն անհրաժեշտ է։

Այդ նույն դարակների վրա յեն պահվում նաև այն ապրանքները, վորոնք հատով են ծախվում կամ վորոնց կշռած ու պատրաստած փաթեթները շատ մեծ տեղ չեն բռնում։

Մանր ապրանքների համար (կոճակ, թել, ժապավեններ և այլն) հարկավոր է ունենալ ցուցարկղ, (НАЛИЧНИК)։ Դրանց մեծությունը զանազան կարող է լինել՝ նայած թե կոոպերատիվում ծախվող մանր ապրանքների տեսակներն ու քանակը վորքան տեղ է պահանջում։ Այդ արկղների կողերը ամուր տախտակից են շինվում, ծածկոցն ապակուց. դրանց բովանդակությունը գնորդի աչքի առաջ պիտի լինի։ Յեթե այս արկղը շատ խոր է պատվիրվում լավ կլինի, յեթե կողքի պատերն էլ ապակուց լինին շինած, վոր միջի ապրանքներն ամեն կողմից յերևան։

Բրնձի, ալյուրի, ամեն տեսակի այլ հացահատիկների համար պիտի պատվիրել հատուկ արկղներ (ларь), վորոնց ներսը կարելի յե մասերի բաժանել՝ նայած ապրանքների տեսակների։ Արկղը պիտի ունենա լավ ծածկոց և պաշտպանված պիտի լինի խոնավությունից։

Բացի այդ բոլորից՝ պիտի ... անի հատուկ դարակներ հացի և մանուֆակտ...

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР

Թիթեղյա արկղներն ու ամանները, վորոնց մեջ կշռովի ապրանքներ են ծախվում, նախքան նրանց ապրանքներով լցնելը պիտի կշռել և դատարկ ամանի քաշը (տարա) վրան թանաքով նշանակել։ Հետագայում, յերբ խանութի ապրանքների հաշվառում ե կատարվում, այդ բանը շատ թեթևացնում ե աշխատանքը։ Այդ ժամանակ ել հարկավոր չի ապրանքը արկղից-արկղ թափել և մաս-մաս կշռելով իմանալ նրա իսկական քաշը։ Բավական ե ամանը ապրանքով կշռել և ամանի քաշը (վոր նրա վրան գրված ե) դուրս գալ։ Այդպիսով ապրանքի ճիշտ քաշը իսկույն հայտնի յե լինում։

«Դյուզգյահի» մի ծայրում դրվում ե գործակատարի «կոնտորական», վորի վրա գործակատարը յուր գրավոր աշխատանքներն ե կատարում։ «Կանտորկան» ունի արկղներ, վորոնց մեջ պահվում են զանազան փաստաթղթեր, ցուցակներ ու փող։

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Ապրանքները խանութում այնպես պիտի տեղավորել, վոր գնորդը ամեն ինչ իսկույն տեսնել կարողանա և իմանա, թե խանութում ինչ կա, ինչ չկա։ Ապրանքների դասավորումն ու խմբավորումն մեծ նշանակություն ունի։ Այնպես պիտի անել, վոր գործակատարը հարկավոր ապրանքը փնտրելու համար ժամանակ չկորցնի և կամ ապրանքներից մի մասի դասավորությունը չփոխի, վոր հարկավոր ապրանքը տեղից վերցնել կարողանա։ Այն գործակատարը, վոր առուծախսի ժամանակ ապրանք փնտրելով կամ ապրանքների դասավորումով ե զբաղվում, ընկերության համար լավ համբավ չի ստեղծում։ Գնորդները միշտ դժգոհ են լինում։ Շատ գնվող ապրանքները միշտ ել ձեռքի տակ պիտի լինեն—ներքևի դարակներում։ Թեթև և քիչ ծախվող ապրանքները, ընդհակառակը, պիտի դասավորել վերևի դարակներում։

Ապրանքները դասավորելիս՝ պիտի գեղեցկության մասին ել մտածել։ Յերբ խանութում յեղած ապրանքները գեղեցիկ են դասավորված, նրանք գրավում են գնորդի ուշադրությունը և ընդհակառակը, յեթե ապրանքները անկարգ դրության մեջ են, մեկ-մեկու վրա թափված են, փոշիով ծածկված, ու անխնամ են պահվում, ապա գնորդը խանութից խույս կըտա՝ քանի վոր խանութի ընդհանուր տեսքը գրավիչ չե, գեղեցիկ չե։

Պահարանի վերևի դարակներում, վոր ապակյա դռներ ունի՝ պիտի տեղավորել այն ապրանքները, վորոնք հատուկ խնամք են պահանջում. այդ ապրանքներն են՝ թեյը, սուրճը, կակաոն, շոկոլադը, բարձր վորակի ծխախոտները և այլն։

Պահարանի մյուս դարակների վրա պիտի տեղավորել այլ ապրանքներ, օրինակ՝ լուցկի, մոմ, անուշեղեն (կոնդիտերսկի ապրանքներ), զանազան յուղեր, քացախ, մանանեխ և այլն։

Պահարանի ներքևի արկղներում պիտի տեղավորել ընկուզեղեն, բրինձ, շաքարավազ և այլ հատիկավոր մթերքներ։

Յեվ վերջապես՝ պահարանի ներքևում կարելի յե պատրաստ փաթեթներում ունենալ ապրանքների վորոշ տեսակներ, վորպեսզի ապրանքներ ծախելիս, նրանց կշռելու վրա յերկար ժամանակ չկորցնվի։ (Այս բանը գնորդներին շատ ե դուր գալիս)։

Խանութի բաց դարակների և «դյազգահի» ներքևի դարակների վրա կարելի յե դարսել ծխախոտը, մախորկան, թղթի փաթեթները, հասարակ սապոնները, կոշկաներկը, և զանազան այլ առարկաններ։ Խանութում (և պահարանների ներքևում մանավորապես) չըպիտի անպետք բաներ կուտակել, ինչպես այդ սովոր են կատարել անուշադիր գործակատարները։

Ցուցարկղի մեջ պիտի խնամքով տեղավորել մանր ապրանքները. անուշահոտ ջրեր (դուխի), գալանտերեյային ապրանքներ, գրենական պիտույքներ (թանաք, գրիչ, մատիտ, տետրներ և այլն)։

Ծանր ապրանքները մանրածախի համար լցվում են հատուկ արկղների (լարերի) մեջ ջոկ-ջոկ։ Այդ ապրանքներն են ցորենը, ալյուրը, աղը, սիսեռը և այլն։

Թիթեղյա ամանների և «բանկաների» մեջ լցվում են այն ապրանքները, որոնք փոշուց ու ոդի ազդեցությունից պիտի լավ պաշտպանվեն. այդպես են մոնպասյեն, զանազան քացրեղենները, քաղցրավենիները և այլն։

Հացը պիտի հատուկ անկյուն ունենա՝ մաքուր ու պաշտպանված, այնպես որ՝ ամեն վոք ձեռքով հացը ջոկել չկարողանա։

Ապրանքները խանութում, դասավորելիս՝ պիտի ինկատի առնել նրանց հատկությունը։ Հայտնի յե, որ մի քանի ապրանքներ շատ զգայուն են ուրիշ ապրանքների «հոտը քաշելու» տեսակետից։ Այսպես որինակ՝ նավթի, ձկնեղենի և այլ ապրանքների հոտը հեշտությամբ և անցնում նրանց մոտ գտնվող ապրանքներին, և վերջիններս կամ փչանում են կամ բոլորովին գործածելու համար անպետք են դառնում։

Հենց այդ պատճառով պիտի այդ «սուր հոտ» ունեցող ապրանքները (նավթը, ծխախոտը, ձկնեղենը, հասարակ սապոնը և այլն) տեղավորել «զգայուն» ապրանքներից հեռու և առանձին (թեյը, սուրճը, անուշեղենները և այլն— զգայուն ապրանքներ են)։

Բացի այդ՝ նավթը պիտի այնպիսի տեղ պահել, որ կրակից հեռու լինի։ Ցեթե խանութը հարմար և, ավելի լավ կլինի, որ «սուր հոտ» ունեցող բոլոր ապրանքները բոլորովին ջոկ բաժանմունքում դասվեն ու ծախվեն մնացած ապրանքներից առանձին։

Այս բոլորը մենք ասում ենք փոքր կոոպերատիվների, գլխավորապես գյուղական կոոպերատիվների մասին։

Մեծ կոոպերատիվներում, մանավանդ քաղաքների մեծ

ընկերություններում, որոնք ծախում են զանազան ապրանքներ, ապրանքների դասավորումը կատարվում է առանձին հիմնական խմբավորումներով։ Ցեթե խանութը յերկու սենյակից է բաղկացած՝ պիտի ապրանքները բաժանել այնպես, որ մեկում լինեն պարենավորման և ուտեստեղենի վերաբերյալ բոլոր առարկաները, իսկ մյուս սենյակում՝ մանուֆակտուրան, գալանտերեյան, կոշկեղենը, անտեսության վերաբերյալ իրերը և ամենեղենը։ Ցեթե խանութը միայն մի սենյակ է՝ պիտի ծախվող ապրանքները այդ նույն հարմարություններով այդտեղ տեղավորել՝ հնարավորին չափ ջոկ-ջոկ խմբերի բաժանելով։

ԽԱՆՈՒԹԻ ԳՈՒՅՔԸ

Բացի վերոհիշյալից՝ ամեն մի խանութում անհրաժեշտ են հետևյալ առարկաները։

1. Նավթի համար յերկաթյա տակառ կամ ավազան և նավթը չափելու գործիք։
2. Ցեթե այդ չկա—յերկու ապակյա մեծ շշեր։
3. Ցերկու հատ «նատոռներ» (ձեթի և նավթի համար ջոկ-ջոկ)։ Ցեթե ընկերությունը ձեթ քիչ է ծախում՝ կարելի յե միայն մեկն ունենալ նավթի համար, իսկ ձեթը ծախել շշերից)։
4. Մի քանի հատ մեծ ու փոքր ձագառներ։
5. Մի քանի մոտաղյա ամաններ՝ ձեթի և յուղի համար։
6. Տասնորդական կշեռք՝ ստացված ապրանքների ստուգման համար։
7. Կախովի կշեռք՝ ալյուրի, ցորենի և այլ ծանր մթերքների կշռելուն հարմարեցված։
8. Ցերկու սեղանի կշեռքներ՝ մեկը 10, մյուսը 15 կիլոգրամ կշռունակությամբ (կշռելու ուժ ունեցող)։ *)

*) Ի նկատի առնելով, որ մոտ ժամանակներում համամիությունական մասշտաբով մտցվելու յեն մետրական չափ ու կշիռներ—այս մասին Հայկոոպը յուր ժամանակին հրատարակելու յե հատուկ գրքույկ։

Ծանոթ. հրատարակչ.

9. Համապատասխան կշռաքարեր։

10. Մետրներ (մետաղյա) յերկու հատ։

Ավելի լավ կլինի յեթե չափերն ու կշռաքարերը ձեռք բերվեն պղնձի։ Թեև մի քիչ թանգ՝ նրանք ավելի դիմացկուն ու մաքուր են, չեն ժանգոտում։

Կշեռքն ու կշռաքարերը մեծ խնամքով պիտի պահել. նրանց վրա պիտի անպատճառ լինի ստուգող պալատի կնիքը։ Վարչությունը և վերաստուգիչ հանձնաժողովը պարտավոր յեն ամսեն գոնե յերկու անգամ ստուգել, վոր կշեռքն ու կշռաքարերը կանոնավոր դրության մեջ լինեն։ Բացի այդ՝ յերեք տարին մի անգամ կշեռքներն ու քարերը պիտի ստուգման յենթարկվեն պետական ստուգող հիմնարկում (պալատում).

Բացի վերոհիշյալից՝ ամեն մի կոոպերատիվում, նայած առևտրի առարկաներին՝ պիտի ունենալ հատուկ ապակյա ծածկոցներ (պանիր, յուղ, կոշիկ և այլն ծածկելու համար), և համապատասխան թվով դանակներ։

Ցեվ վերջապես անհրաժեշտ ե այն ամենը, ինչ վոր կոոպերատիվի վարչությանը և գործակատարին գործի ժամանակ կարող են պետք գալ. գրասեղան (վարչության համար), յուր բոլոր պարագաներով) ժամացույց, մետաղյա սնդուկ՝ փող և փաստաթղթեր պահելու համար, «գանդատների արկղ» (խանութում կախելու համար), մուրճ և այլն։

Ցերբեք չը պիտի մոռանալ, վոր կոոպերատիվի վարչության արածները այդ մանր հարմարություններովն ե, վոր ավելի արդյունավետ են դառնալու։

Գործակատարի և այլ ծառայողների ձեռքերի մաքրությունը ևս մեծ նշանակություն ունի. հենց դրա համար խանութի հետևում պիտի ունենալ մի փոքրիկ լվացարան. ամեն մի աշխատող որը մի քանի անգամ պարտավոր ե ձեռքերը լվանալ՝

ցուցադրելով թե յուր մաքրությունը և թե ուշադրությունը դեպի կոոպերատիվի գնորդները։

Մենք դժվարանում ենք անուն—անուն թվել այն բոլորը ինչ վոր կոոպերատիվին հարկավոր ե. վարչության և ծառայողների ուշադրությունը և կոոպերատիվի գործնական կարիքները աստիճանաբար մեր ցույց տված ցուցակը կը լրացնեն՝ ստեղծելով կոոպերացիայի աշխատավորների համար հարկավոր և անհրաժեշտ հարմարությունները։

Ավելի ուշադրություն այս բոլոր մանր հարցերին, վորովհետև դրանց լուծումից ե կախված կոոպերատիվի աշխատանքի հաջողությունը։

«ՀԱՅԿՈՈՊԻ» ԿԱԶՄ-ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

Սրանով հայտարարում է Հայաստանի բոլոր սպառ-կոոպերատիվներին, որ նա տալիս է գրավոր ու բանավոր խորհուրդներ կոոպերատիվ շինարարության ու կազմակերպության բոլոր խնդիրների վերաբերմամբ, մասնավորապես նա.

1. Յուր հրահանգիչների միջոցով տեղերում վարում է կազմակերպչական աշխատանք, հետազոտում ու քննում է կոոպերատիվների գործունեությունը, տալիս է համապատասխան ցուցումներ ու հրահանգներ՝ յերևան հանած թերությունների ու պակասներ վերացնելու համար:

2. Մշակում է կոոպերատիվների առևտրական ու ֆինանսական գործունեության ծրագրներ, խորհուրդներ է տալիս առևտրական կոոպերատիվ քաղաքականության, վերադիրների և այլ գործնական խնդիրների մասին։

3. Կոոպերատիվներին առաջարկում է պատասխանատու աշխատակիցներ (հաշվապահներ, հաշվետարներ, պատասխանատու գործակատարներ)։

4. Կանոնավորում է պետական առևտրական օրգաններում և վարկային հիմնարկներում սկզբնական կոոպերատիվների ապրանքային ու վարկային խնդիրները՝ պարզելով նրանց փոխհարաբերությունները։

Կազմ-հրահանգչական բաժինը տեղեկանքներ է տալիս կոոպերատիվ շինարարության վերաբերյալ խնդիրների մասին բոլոր խորհրդային, տնտեսակցական ու կուսակցական մարմիններին, վերջիններիս պահանջմամբ:

Հասցեն՝ Յերևան, *Շահումյան փողոց № 3, Հայկոոպ կազմ. հրահ. բաժին.*

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Պ. Ձոլյան. — *Կոոպերատիվի ցավերը:*
2. Մարգո. — *Կինը յեվ կոոպերացիան:*
3. Գ. Աբով. *Լենինն ու կոոպերացիան (չափածո)։*

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ"

ՅԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

	ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ
Տարեկան	*3 ռուբ. 50 կոպ.*	*3 ռուբ. 80 կոպեկ*
Կես տարի	*1 » 80 «*	*1 » 90 »*
3 ամիս	*1 »*	*1 » 10 »*

Հասցեն՝ Յերևան, Շահումյան փողոց № 3 — «Հայկոոպ»-ի խմբագրություն

ՀՀ Ազգային գրադարան
NL0203204

Ա
Ա150

1

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.